

ՎԱՀԵ ՌՈՄԻԿԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի երաժշտագետ, բակալավր, 2-րդ կուրս
E-mail: vahegevorgyan405@gmail.com
Doi:10.58580/18290019-2024.1-2-127

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Նունե Ռոմեոյի Աթանասյանի՝ 6.12.2024 թ.,
ընդունվել է տպագրության՝ 12.12.2024 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.12.2024 թ.:
© Հեղինակ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution
4.0, 3.0 Licence-ին համապատասխան:

Հնթերցվել է գիտաժողովին 2024 թ. աշնանային ուսանողական գիտաժողովին
Մասնագիտական դեկավար՝ արվ. թեկնածու, պրոֆեսոր Ալինա Աշոտի Փահլևանյան

ՖՈՒՆԿՆՈՒՄԵՆՏԱԿԱՆ ԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՐԿԱ

**ԴՐՎԱԳՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳՎԱԾՔԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(ուսումնասիրություն և նյութեր)**

Ամփոփում

Վասպուրականի ժողովրդական բանահյուսությունը հանդիսանում է մեր ժողովրդի հոգևոր մշակութային ժառանգության լավագույն դրսևորումներից մեկը: Այս ազգագրական գոտու ժողովրդական երգվածքին բնորոշ որոշ առանձնահատկություններ համակողմանի ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է անվանի էթնոէրաժշտագետ, բանահավաք Ալինա Փահլևանյանը: Ներկա հոդվածում անդրադարձել ենք Վասպուրականի ժողովրդական երգվածքի պատմությանը, այն դիտարկելով ԺԹ դարավերջի և Ի դարասկզբի սահմաններում: Հատկապես ընդգծել ենք այն հանգամանքը, որ Հայոց ցեղասպանության հետևանքով ժողովրդական երգը ևս զոհ է դարձել թշնամական ոճրագործություններին: Պատմական այս հանգամանքով պայմանավորված, ժողովրդական երգարվեստում ի հայտ են եկել նոր երգատեսակներ, երաժշտական լեզվամտածողության նոր տարրեր և արտահայտչամիջոցներ:

Բանալի-բաներ. Վան, Վասպուրական, երաժշտական բարբառ, երգվածք, Հայոց ցեղասպանություն, Ալինա Փահլևանյան, Հայրիկ Մուրադյան, Խրիմյան Հայրիկ [Տ. Մկրտիչ Ա Վանեցի], ժողովրդական երգամտածողություն, հարմոնիկ ձայնակարգ, դորիական ձայնակարգ:

Abstract

2nd-Year Bachelor Degree Student at the Musicology Department of Yerevan Komitas State Conservatory Vahe Romik Gevorgyan. - "Episodes from the history of Vaspurakan folk singing (Research and Materials)".
The folk heritage of Vaspurakan is one of the finest expressions of our people's spiritual and cultural legacy. Some distinctive features of the folk singing tradition from this ethnographic region have been thoroughly studied and presented by the renowned ethnomusicologist and folklorist Alina Pahlevanyan. In the present article, we explore the history of Vaspurakan's folk singing, focusing on the period spanning the late 19th and early 20th centuries. Special emphasis is placed on the fact that, as a result of the Armenian Genocide, the folk song tradition also fell victim to acts of hostility and destruction. This historical circumstance led to the emergence of new song genres within folk music, along with novel elements of musical thinking and expressive means.

Key Words: Van, Vaspurakan, musical dialect, singing, Armenian Genocide, Alina Pahlevanyan, Hayrik Muradyan, Khrimian Hayrik [Catholicos Mkrtich I of Van], folk musical thinking, harmonic mode, Dorian mode.

Абстракт

Студент 2-го курса бакалавриата кафедры музыковедения Ереванской государственной консерватории имени Комитаса Ваге Ромикович Ееворкян. - "Эпизоды истории васпураканской народной песни" (исследования и материалы).
Фольклор Васпуракана - одно из лучших проявлений духовного и культурного наследия нашего народа. Некоторые особенности, характерные для народных песен этого этнографического региона, были представлены, в результате комплексного исследования известного этномузыковеда, фольклориста Алины. Пахлеванян. фольклориста Алины. Пахлеванян. В данной статье мы коснулись истории народных песен Васпуракана конца XIX - начала XX вв. Мы особо подчеркнули тот факт, что в результате Геноцида армян народные песни также стали жертвами враждебных преступлений. Благодаря этому историческому обстоятельству в народной песне появились новые песенные жанры., новые элементы, музыкально-языкового мышления и средства выразительности.

Վասպուրականի երաժշտական բանահյուսություն

ՖՈՒԿՆԵՐՍՈՒԹՅՈՒՆ-ՆԱՍԱՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԻՔԻՈՆ

Ключевые слова: Ван, Васпуракан, музыкальный диалект, песня, Геноцид армян, Алина Пахлеванян, Айрик Мурадян, Хримян Айрик [Т. Мкртчян, А Ванец], теория народной песни, гармонический лад, дорийский лад.

«Մակայն դուք մի վիատիք, Աւետարանի հարուածեալ որդիքներդ յոյս առ ու քաջալերումէ, ժողովուրդ Հայոց, երկհագար ամ է որ միշտ ջախջախուիս ու չես մեռնիր. Պարսիկ, Յոյն, Արաբացին եւ Կովկասեան բարբարոս ազգերը միշտ արշաւեցին ու քանդեցին քո հայրենիք, բայց դու անվկանդ աննուսահատ տոկացող ոգի մի ունիս, որով կ'ապրիս ու կը մնաս մինչև ցայսօր»:

ԽՆԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

Վասպուրականը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնօրրանն է: Այստեղ է ձևավորվել հայկական առաջին պետական միավորումներից մեկը՝ Վանի թագավորությունը (Ք. ա. 9 - 7 դդ.), որը փաստում է, որ Վասպուրականը հայերով բնակեցված է եղել վաղնջական ժամանակներից: Դժվար է ասել, թե ինչպիսին է եղել տեղի մշակույթը, հատկապես ժողովրդական բանահյուսությունը հնագույն շրջանում: Այդուհանդերձ, Մր. Մովսես Խորենացու (Եդ.) «Հայոց պատմությունը» ներկայացնում է բանահյուսական նյութերի այնպիսի նմուշներ, որոնք իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով փաստում են, որ դեռևս նախորդ հարյուրամյակներում ձևավորված են եղել ժողովրդական ստեղծագործության զարգացած հարուստ ավանդույթներ:

Հագարամյականների հնության կնիքով դրոշմված Վասպուրականի ժողովրդական բանահյուսությունը հանդիսանում է մեր ժողովրդի հոգևոր մշակութային ժառանգության լավագույն դրսևորումներից մեկը: Թեև երաժշտական հայագիտության մեջ ժողովրդական երգվածքների ուսումնասիրումը մեծ մասամբ մնացել է ստվերում, այնուամենայնիվ շնորհիվ պրոֆեսոր Ալինա Աշոտի Փահլևանյանի դիտարկումների* (1. էջ 129-140), որոշակիորեն հնարավոր է պատկերացում կազմել մի քանի ազգագրական գոտիների երաժշտամտածողության առանձնահատկությունների մասին, որոնց թվում նաև Վասպուրականի: Ի մի բերելով իր ուսումնասիրությունների արդյունքները Ա. Փահլևանյանը ներկայացնում է երաժշտական մտածողության բնութագրական մի քանի գծեր: Մասնավորաբար, Վասպուրականի ժողովրդական երգվածքի մասին, ըստ

Փահլևանյանի ուսումնասիրության, կարող ենք առանձնացնել հետևյալը.

ա) ձայնակարգ – Վասպուրական – Մոկս – Շատախ գոտում գերակշռում է կվինտային հիմքով եռլական ձայնակարգը:

բ) ձայնածավալ – փոքր ձայնածավալի երգերն ընդամենը մեկ հինգերորդ մասն են կազմում, հեքսախորդները՝ մոտավորապես մեկ երրորդը, իսկ մեծ ձայնածավալի երգերը (հեպտախորդից մինչև դոդեկախորդ) ընդհանուր թվի կեսից ավելին:

գ) կառուցվածք – բնորոշ է հակադիր նախադասությունների համադրումը (AB), թեև կարևոր նշանակություն ունի նաև նույն նախադասության տարբերակված կրկնությունը (AA1):

Անկասկած Փահլևանյանի այս ուսումնասիրությունը նշանակալի ձեռքբերում է երաժշտական հայագիտության համար: Եվ այն ուղենշային դեր է մեծ նշանակություն ունի ֆոլկլորագիտության արդի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների համար: Մակայն պետք է նշենք, որ ժողովրդական բանահյուսությունը լինելով տարբերային և հարափոփոխ արվեստ, որոշ երևույթների ուսումնասիրումն առաջացնում է անխուսափելի խնդիրներ: Այսինքն ոչ միշտ է հնարավոր որևէ խնդիր կամ երևույթ ներկայացնել միանշանակ ձևակերպմամբ: Կարևոր է, որ քննվող երեկույթը դիտարկվի կոնկրետ ժամանակաշրջանի համատեքստում, քանի որ ժողովրդական երգը նախևառաջ ժամանակային արվեստ է: Ցավոք սրտի այս սկզբունքով հնարավոր չէ ճշգրտորեն առաջնորդվել, պարզ այն պատճառով, որ հայ ժողովրդական երգի ձայնագրյալ նմուշները երևան են եկել ԺԹ դարի երկրորդ կեսից միայն: Երկրորդ կարևոր հանգամանքը, պատմական իրադարձություններն են, որոնք իրենց անջնջելի հետքն են թողնում արվեստի և մշակույթի բոլոր բնագավառների վրա: Որքան էլ ընդհանրացված լինեն մեր բնորոշումները երաժշտական այս կամ այն երևույթի վերաբերյալ, այնուամենայնիվ եթե քննարկենք հայ ժողովրդի պատմության մի շարք դրվագներ ասվածք միանգամայն կարող է փաստարկվել պատմական նյութերով: Մասնավորաբար, խոսքը Հայոց ցեղասպանության մասին է: Պատմական այս իրողությամբ պայմանավորված մենք կորցրեցինք հող ու հայրենիք, ունեցանք ավելի քան մեկ ու կես միլիոն անմեղ գոհեր, կորցրած տուն ու ընտանիք դարձանք գաղթական: Եվ փոխվեց ամեն ինչ: Ժողովուրդն իր տառապանքը, երբեք չմարող հույսը և դեպի Էրզրի կրկին վերադառնալու հավատն սկսեց արտահայտել երգով: Այստեղից կարելի է ենթադրել, որ արևմտահայոց երաժշտական մտածողությունը ևս որոշակի փոփոխություններ կրեց: Անկասկած ժողովրդական երգը ևս այս շրջանում գոհ դարձավ թշնամական ոճագործությունների: Քանի որ ներկա նյութի շրջանակներից դուրս է վերոհիշյալ խնդիրների առավել հանգամանակից

* Հայ և համաշխարհային երաժշտական ֆոլկլորագիտության մեջ երաժշտական լեզվի տարածաշրջանային (ռեգիոնալ) առանձնահատկությունները բնորոշվում է «երաժշտական բարբառ» ձևակերպմամբ: Մակայն մենք օգտվելով հայ հոգևոր երաժշտության տեսության տերմինաբանությունից գործածության մեջ ենք դնում «ժողովրդական երգվածք» ձևակերպումը:

Վասպուրականի երաժշտական քանահյուսություն

պարզաբանումը, այդ իսկ պատճառով որպես ամփոփում վատահարար կարող ենք նշել, որ հետագայում ժողովրդագրական, ազգագրական նյութերի առավել լայն ուսումնասիրությունները կփաստեն մեր դիտարկումների հավաստիությունը:

ԺԹ դարավերջից սկսած երիտթուրք ազգայնականները կազմակերպեցին արևմտահայերի զանգվածային կոտորածներ: Առաջին թիրախներից մեկը Վան քաղաքն էր: «1876 ղեկտեմբերի 1 (13)-ի գիշերը Վան քաղաքի պատմագրության մեջ բոցեղեն տառերով դրոշմվեցավ: Այն քաղաքը, որ Հայաստանի մեջ յուր ճոխությամբ և շինարարությամբ կպանծար, մեկ գիշերվան մեջ հանկարծ ողբակից դարձավ Անի քաղաքին՝ հրդեհ, կոդպուտ և սպանություն – այդ բառերը սուկալի մը երրորդություն կազմած էին, գոր ամեն բերան կհնչեր սարսափահար դողդոջուն շրթամբբ: Կարծես թե Լենկթեմուրի սն օրերուն դարադարձը կկատարվեր նույն գիշեր և վանդալներու ուրվականներ յուրյանց պատաններով գերեզմանեն դուրս էլած՝ կհրդեհեին ամեն կողմ», – գրված է 1876 թ. ղեկտեմբերի 15 (31) – ի վանեցիների նամակում, որով նրանք օգնության ձեռք մեկնելու սպասումով դիմում են հայրենակիցներին (9. էջ 2): Այս սարսափագրու ոճագործությանն անդրադարձավ նաև Վասպուրականի արծիվը՝ Խրիմյան Հայրիկը: «Վան-գոյժ»-ը Հայրիկը գրեց նկարագրելով այդ օրերի դեպքերը, սգալով հայրենի երկրին վրա հասած աղետը: Միննույն ժամանակ հույսի ու հավատքի խոսք ուղեկցելով նա մխիթարեց հարազատ ժողովրդին: ««Հաւատք քո կեցուցին զբեզ», սասց Քրիստոս, ուրեմն հաւատա, որ երկնից Նախախնամութիւն արդար եւ բարերար էզ քո սերմն ու արմատ պիտի պահէ այդ բնիկ հողին մէջ, որ քո հայրենատուր ժառանգութիւն է, ընդունայն կը ճգնին այն ձեռք, որ կ'աշխատին զբեզ արմատախիլ առնել» – գրում է Խրիմյան Հայրիկը (10, էջ 422): Իր ազգանվեր գործունեության շնորհիվ Խրիմյան Հայրիկը վայելում էր ժողովրդի սերն ու հարգանքը (2.): Դրա վառ ապացույցն են հանդիսանում նրան ձոնված ժողովրդական երգերը: Որոնցից է «Պարի լուսու աստղ երեկաց» երգը: Անվանի երգասաց, ծնունդով Վանի նահանգի Շատախ գավառի Ջնուկ գյուղից Հայրիկ Մուրադյանն այդ երգի մասին գրում է հետևյալը. – ««Պարի լուսու աստղ երեկաց» երգը ծնվել է Վանի շրջակա գավառներում, ԺԹ դարի վաթսուներկան թվականներին, երբ Մկրտիչ Խրիմյանի (Հայրիկ) նախաձեռնությամբ, առաջին անգամ Վասպուրականում գյուղատնտեսության մեջ օգտագործվեց գութանը: Երգը արագորեն տարածվեց բոլոր գավառներում: Ներկայացնում ենք այն է ինչպես սովորել ենք Վանի հայկական դպրոցում 1916 թվականին» (2. էջ 173)*:

Օրինակ 1. «Պարի լուսու աստղ երեկաց»
Example 1. “Pari lusu astgh erevatz”
Пример 1. “Пари лусу астх эреватц”



Ա. Ա. Փահլևանյանը, ով Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանել է Վան-Վասպուրական ազգագրական գոտու շուրջ 150 երգ և կազմել է «Հայրենի երգեր» ժողովածուն, հավելում է հետևյալը. «Հետագայում, այս երգի շուրջ գրույցի ժամանակ Հ. Մուրադյանը պատմել է հետևյալը: «Պարի լուսու աստղ երեկաց» երգը հորինվել է Վարազա վանքում: Խրիմյան Հայրիկը վանահայրն էր: Այնտեղ ժառանգավորաց դպրոց էր բացել, և այդ դպրոցի սաները դարձել էին ամբողջ Վասպուրականի ազատագրական պայքարի մարտիկներ: Նրա շնչի տակ հրաշալի սերունդ էր աճում: Խրիմյան Հայրիկն էլ նման չէր վանականներից շատերին: Նա ասում էր. «Պետք է հոգևորականն ապրի համեստ, մի պնակ թանապուրով, որպեսզի եկեղեցու եկամուտներն օգտագործվի հայրենիքի պաշտպանության համար»: Ահա այս շրջանումն էր, երբ ինքը մաճը բռնած վարում էր Վարազա Վանքի արտերը, տղաները՝ վանքի հոտաղները, ոգևորված, այս երգն են հորինել»: Այս երգի ավելի պարզ տարբերակն է «Վանեցոց գութանի երգը» (Մսր Մեկիբյան, հ, 2, N 80): «Պարի լուսու աստղ երեկաց» – դա, հավանաբար, ավելի շուտ երգ է գութանի մասին, քան աշխատանքի պահին կատարվող գութաներգ, ինչպիսին են մեր ավանդական հորովվելները» (2. էջ 173):

Մեծ հային նվիրված հաջորդ ստեղծագործությունը «Հայրիկ, հայրիկ» երգն է, որի մասին Հայրիկ Մուրադյանը գրում է. ««Հայրիկ, հայրիկ» երգը առաջին անգամ կատարել է վանեցի Մեսրոպ Ջանիկյանը 1885 թվականին: Թուրքական իշխանությունների որոշմամբ Խրիմյան Մկրտիչը (Հայրիկ) Վանից արտարվում է: Վանի հայությունն անհուն կսկիծով ուղեկցում է իր հոգևոր հորը մինչև Ավանց գյուղի նավահանգիստը: Երբ Խրիմյանին առագաստանով են բարձրանում, Մեսրոպ Ջանիկյանը դիմում է թուրք ոստիկաններին և խնդրում՝ նախքան առագաստանովի շարժվելը թույլ տալ երգելու: Ոստիկանապետը չի առարկում: Եվ Ջանիկյանն առաջին անգամ կատարում է այս երգը, որով վանեցիները հրաժեշտ են տալիս իրենց սիրելի առաջնորդին: «Հայրիկ, հայրիկ» երգն արագորեն տարածվում է Վասպուրականում և շրթից շուրթ անցնելով՝ տարբերակներ գոյացնում: Մենք ներկայացնում ենք այս երգն այնպես, ինչպես Ջնուկ գյուղում» (2. էջ 181):

* Ս. Մկրտիչ Ա Վանեցու կյանքի և գործունեության, կաթողիկոսական գահակալության տարիների մասին. տե:ս Մադաթիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում /հայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմում, Գ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001 թ., 5374-5834 երես:

Վասպուրականի երաժշտական բանահյուսություն

Օրինակ 2. «Հայրիկ, Հայրիկ»
Example 2. "Hayrik, Hayrik"
Пример 2. "Айрик, Айрик"



Երգի լայնաշունչ մեղեդին բանաստեղծական տեքստի հետ ներդաշնակություն կազմելով հաղորդում է բարձր հուզականություն: Մեղեդին բնորոշ է քաղաքային երգամտածողությանը, միննույն ժամանակ նշմարելի են վիպաքնարական մոտիվներ:

Հայրիկ, հայրիկ, քո հայրենիք՝
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերավ
Ցավերդ դառան բյուր, հազար:

Գումիտասագետ Ռոբերտ Աթայանը խոսելով այս երգի մասին նշում է, որ Խրիմյան Հայրիկի Հայոց հայրապետ ընտրվելու առթիվ Մեսրոպ Ջանիկյանը 1892 թ. գրում է «պատասխան» երգ.


«Հայրի՛կ, Հայրի՛կ, քեզ ավետիս,
Վասպուրական մեր աշխարհ
Փուշը իվեց, քեզ վարդ բերավ,
Հրճվի՛ր, ցնձա՛, բյուր հազար...»:

Երգի առաջին տարբերակը 1890-ականների վերջերին քառաձայն երգչախմբի համար մշակել է Գումիտաս Վարդապետը (3. էջ 175): Այս երգի մասին երաժշտագետ Արաքսի Մարյանի «Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը» ուսումնասիրությունից տեղեկանում ենք, որ նույն մեղեդիով երգվել են նաև «Առ սիրունիս» և «Անձուկք պղտեցի հայ մանկանց» երգերը, որոնք ճիշտ է թեմատիկայով տարբեր են, բայց բնույթով նույն են (4. էջ 152):

Խրիմյան Հայրիկին նվիրված հաջորդ երգի մեղեդու համար հիմք է ծառայել հայտնի «Առաքել, Մուշեղ լեռներեն իջան» հայրենասիրական երգը: Մեզ հայտնի տարբերակները երեքն են. առաջինը՝ «Հայրենի երգեր» ժողովածուից, երկրորդը՝ Մանուկ Մանուկյանի կազմած «Մարտունու շրջանի ժողովրդական երգեր» ժողովածուից, և վերջինը՝ Պետրոս Ալախատյեանի «Բալուխի (և տարածաշրջանի) երաժշտական – ազգագրական հաւաքածո» ժողովածուից, երգասաց Մարո Նալբանդյան: Առաջին տարբերակի մասին տվյալներ բացակայում են, իսկ երկրորդ տարբերակի մասին ծանոթագրությունից հայտնի է, որ այն Մ. Մանուկյանը գրառել է 09.07.1977 թ. Լիճք գյուղում, երգասաց Հայրիկ Ղազարյան: Վերջինս հայտնել է, որ երգը կատա-

րել են պարելով՝ իբրև շուրջպար (5. էջ 179): Ճիշտ է երգի մեղեդին գյուղի է, բայց բացարձակապես կապ չունի պարերգային ժանրի հետ, և բոլորովին այլ ասելիք ունի:

Օրինակ 3. «Խրիմյան հայրիկ»
Example 3. "Khrimyan Hayrik"
Пример 3. "Хримян Айрик"



Երեք երգերն էլ հիմքում ունենալով հայտնի մեղեդին, իրենց վրա կրում են ժողովրդական երգամտածողությանը խիստ բնորոշ տարբերակայնության կնիքը: Ընդ որում, բացի մեղեդիական տարբերակումներից, խոսքային տեքստը ևս տարբերակված է: Սակայն ի տարբերություն մեղեդու, վերոնշյալ հանգամանքով պայմանավորված դրանք կարող ենք դիտարկել, որպես առանձին ինքնուրույն ստեղծագործություններ, քանի որ քիչ են համընկնումները: Երգի վերջին Բալուխի տարբերակն աչքի է ընկնում նրանով, որ խոսքային տեքստի որոշ հատվածներում պահպանվել են «Առաքել, Մուշեղ լեռներեն իջան» երգի բնագրային տողերը:

Այսպիսով կարող ենք փաստել, որ Հայոց 125-րդ կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցին իր հայրենասիրական, ազատագրական գաղափարներով և ազգանվեր գործունեությամբ այնքան է ոգեշնչել մեր ժողովրդին, որ իբրև երախտագիտության դրսևորում ստեղծվել են նրան նվիրված մի շարք երգեր: Երգեր, որոնք խոր արմատներով կապված են նախնառաջ Վասպուրական աշխարհի հետ, այնպես ինչպես ինքը Խրիմյան Հայրիկը:

Դառնալով ԺԹ դարավերջի արևմտահայոց կոտորածներին, նշենք, որ այդ օրերի ողբերգական տեսարանները ժողովուրդը վկայել է նաև երգերում: Այդպիսի մի օրինակ է «Բարկ արև» երգը: Մեզ հայտնի տարբերակները հրատարակված են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Հայ ավանդական երաժշտություն» մատենաշարի 5-րդ հատորում, բանասաց Սերոբ Վարդանյան (7. էջ 51): Այս ժողովածուն ամփոփում է 1987 թ. ինստիտուտի կողմից Արտաշատի շրջանում կազմակերպված գիտարշավի Վասպուրականի ավանդական երգային նմուշների գրառումների ընտրանին (գիտարշավի ղեկավար՝ Զավեն Թագակյան, մասնակիցներ՝ Դավիթ Դերոյան, Աշոտ Մուրադյան): Երկու երգերն էլ ստեղծված լինելով գրեթե նույն խոսքային տեքստի հիման վրա, մեղեդու կառուցվածքով այնքան են հեռավացած, որ սխալ կլինի դրանք դիտարկել իբրև նույն երգի տարբերակներ:

Վասպուրականի երաժշտական քանահյուսություն

Օրինակ 4. «Բարկ արև»
Example 4. "Bark arev"
Пример 4. Барк арев

Բարկ ար - և, ա - նուշ ա - մառ...
Բոլակ, թափակ երկ-նու կամար,
Թա - լեց պաղ ձուն խա - յու խա - մար,
Էրկիր դարձուց ա - վեր, խա - վար:
Ի - ներ ա - ջու, Ի - ներ ծղ - մեռ,
Մըն է կարուն՝ շի - կեր ա - մառ,
Ի - ներ ա - ջու, Ի - ներ ծղ - մեռ,
Մըն է կարուն շի - կեր ա - մառ:

Քանի որ խոսքային տեքստը երկու երգերում էլ գրեթե նույնն է, հետևապես երգում նկարագրվող իրադարձության պատմական դեպքերն էլ պետք է նույնը լինեն: Ցավոք սրտի այս երգերի ստեղծման կամ նկարագրվող դեպքերի վերաբերյալ վերոհիշյալ ժողովածուում տեղեկություններ չկան:

Բարկ արև, անուշ ամառ,
Բլավ, թափավ երկնու կամար,
Թալեց պաղ ձուն խայու խամար,
Էրկիր դարձուց ավեր խավար...

Ինչպես պարզ է դառնում երգի տեքստից, նկարագրվող դեպքը տեղի է ունեցել ամռանը: Այս շրջանում, ինչպես հայտնի է, ամռանը տեղի են ունեցել երկու իրադարձություններ: Մեկը 1896 թ., մյուսը՝ 1897 թ.: Հայտնի է, որ 1895-1896 թթ. Վանի ինքնապաշտպանական կռիվների մի խումբ մասնակիցներ, ապավինելով եվրոպական հյուպատոսների երաշխավորությանը, 1896 թ. ամռանը թողնում են Վանը, որպեսզի անցնեն Պարսկաստան: Մակայն քրդական մարզիկ ցեղի կողմից Առնաուլ-Խանասոր կոչված վայրում շրջափակման մեջ ընկնելով զոհվում են: Իսկ 1887 թ. նույն Խանասոր վայրում հայերը նախահարձակ լինելով հաղթանակ են տանում: Բանագետ Ալվարդ Ղազիյանն իր «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» ժողովածուի առաջաբանում այս պատմական դեպքերի հետ է կապում «Կովեցք, տղերք, կովեցք քաջ-քաջ» և «Խանասոր» երգերը: Առաջինը վերագրելով 1896 թ. դեպքերին, իսկ երկրորդը, որպես հաղթական-հերոսական երգ՝ 1897 թ. (Ց. էջ 28): Մեր համոզմամբ «Բարկ արև» երգում ներկայացված է 1896 թ. ողբերգական դեպքերը:

Առաջին երգն ունի երկմաս կառուցվածք: Այն ծավալվում է 4 հիմնաձայնով հարմոնիկ ձայնակարգում,

հեպտախորդի սահմաններում: Երկրորդ «Բարկ արև էր» երգը նույնպես ունի երկմաս կառուցվածք: Այս երգում ձայնակարգը փոփոխական է: Սկզբում այն ծավալվում է e-ի հիմնաձայնով կվարտային օժանդակ հետակետով եռյական ձայնակարգում, իսկ երկրորդ հատվածում երկրորդ աստիճանի իջեջումը հաղորդում է փոյուզիական երանգ: Ձայնակարգային այս փոփոխությունը՝ մոդուլացիան, երգին հաղորդում է դրամատիկ ողբերգականություն:

ԺԹ դարավերջի և Ի դարասկզբի թուրքական ոճրագործությունները ներկայացնող հայտնի և անհայտ երգերը պատկերում են մեր ժողովրդի դժվարին ուղու ամբողջ ընթացքը՝ «կյանքն ինչպես որ էր» ցեղասպանությունից մինչև հերոսական մարտեր և կռիվներ: Վերջին իրադարձությունները տեղի ունենալով նաև Վանում, բնականաբար պետք է արդարադարձ ունենային տեղի ժողովրդական երգվածքի վրա: Վանի ինքնապաշտպանական կռիվները, ֆիդայիների հայրենիքի պաշտպանության և ազատության գաղափարները, տեղի են տվել հայրենասիրական երգերի ասպարեզ գալուն: Թե՛ գեղջկական, թե՛ քաղաքային երաժշտամտածողությամբ ստեղծված այդ երգերից շատերը այսօր էլ սիրված են և շարունակում են հնչել ամենատարբեր առիթներով՝ «Թիփի բորան», «Ով որ քաջ է», «Զարթիր լառ» և այլն: Վանի երգերից այստեղ կառանձնացնենք «Հայրենի երգեր» ժողովածուում տեղ գտած «Դեպի Վան» երգը: Երգը բաղկացած է 4 երկտող տներից և երկտող կրկնակից, հետևաբար ունի երկմաս կառուցվածք:

Առաջ գնանք անվախ, վառված սրտերով,
Թշնամուն հալածենք՝ խրոխտ շարքերով:
Արշավենք, սիրելի, դեպի սիրուն Վան,
Արշավենք, նազելի, դեպի անուշ Վան:

Օրինակ 5. «Դեպի Վան»
Example 5. "To Van"
Пример 5. "Депи Ван"

տրոս՝ուզ սի դաշ - տուն դա - տր վեր - շա - ցավ.
սերքշուա - յոց սր - աեր ույ - սով լոց - վե - ցավ.
ար - շա - վենտ վի - ռե - լի դե - ալ սի - յան Վան.

Մեղեդու ծավալման մտածողությունը հիշեցնում է վիպական ժանրին բնորոշ որոշ հատկանիշներ: Առաջին մասը ծավալվելով դորիական ձայնակարգի վերին քառալարում, ուղեկցվող ասերգայնության տարրերով, մեղեդուն հաղորդվում է գորականչի բնույթ: Այնուհետև աստիճանաբար շրջագարդելով հիմնաձայնի ոլորտը, որը հաղիսանում է կրկնակի եղանակավորման հատվածը, հիմնաձայնի հաստատումով, հաստատվում է նաև երգի հիմնական ասելիքը՝ դեպի Վան վերադառնալու բաղձանքը:

Ամփոփելով նշենք, որ հիարկե այսպեսնով չեն սահմանափակվում Վասպուրականի ժողովրդական երգվածքի ձայնագրյալ նմուշները: Իսկզբանե առաջնորդվելով մեր հիմնական նպատակին հավատարիմ, մենք փորձեցինք ներկայացնել այդ հարուստ նյութից մի քանի դրվագներ միայն: Ինչի անդրադարձում որոշակիորեն նշմարելի են դառնում քննվող տարածաշրջանի ժողովրդական երգվածքին բնորոշ ԺԹ դարավերջի և Ի դարասկզբի պատմական իրադարձություններն արտացոլող երգերի թեմատիկան և երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Փահլևանյան Ա. Ա., Հայ երաժշտական ֆոլկլորագիտության արդի հիմնախնդիրները, Դասագիրք կոնսերվատորիայի մագիստրոսական ուսուցման համար, Եր., Ամրոց Գրուպ, 2018 թ., - 176 էջ:
2. «Հայրենի երգեր», Հայրիկ Մուրադյանի ձայնից վերծանեց, կազմեց և խմբագրեց՝ Ա. Ա. Փահլևանյանը, Եր., Նոր գիրք, 2007 թ.:
3. Կոմիտաս, Երկերի ժողովածու, 4-րդ հատոր, (Մեներգեր և խմբերգեր), խմբագիր՝ Ռ. Ա. Աթայ ան, Եր., Հայ աստան, 1976 թ., - 203 էջ:
4. Մարյան Ա. Ա., Հայ քաղաքային ժողովրդական երգարվեստը, //Հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, 4-րդ հատոր, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1973 թ., էջ 85-175:
5. Մանուկյան Մ. Թ., Մարտունու շրջանի ժողովրդական երգեր (1974-1977 թթ. գիտարշավի նյութեր), Եր., 1977 թ., - 191 էջ:
6. Այստառյան Պ, Բալուի (և տարածաշրջանի) երաժշտական-ազգագրական հաւաքածո, երգասաց՝ Մարո Նալպանտեան, Կլենտեյլ, «Դրագրակ» հրատ., 2009 թ., - 446 էջ:
7. //Հայ ավանդական երաժշտություն, Պրակ 5, (Վասպուրականի ավանդական երգեր և նվագներ), Հավաքեց, վերծանեց՝ նոտագրեց և կազմեց Ջավեն Թազակյանը, Պրակի խմբագիրներ՝ Ջ. Թազակյան, Հ. Պիկիչյան, Եր., Ամրոց գրուպ, 2010 թ., - 240 էջ:
8. Ղազիյան Ա., Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 1989 թ., - 391 էջ:
9. //Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, /կազմողներ՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Եր., Հայաստան, 1991 թ., - 758 էջ:
10. Խրիմյան հայրիկ, Երկեր, Հրատարակության պատրաստեցին՝ Հ. Պետրոսյան, Ա. Մարյան, Եր., ԵՊՀ հրատ., 1992 թ., - 448 էջ:
11. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Ազգապատում //Հայ ուղղափառ եկեղեցու անցքերն սկիզբից մինչև մեր օրերը, յարակից ազգային պարագաներով պատմում, Գ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001 թ.:

Pahlevanyan, A. A., Current Issues in Armenian Musical Folkloristics, Textbook for Master's Studies at the Conservatory, Yerevan, "Amrots Group", 2018, - 176 pages. "Songs of the Homeland", transcribed, compiled, and notated from Hayrik Muradyan's performances by A. A. Pahlevanyan, Yerevan, "Nor Girik", 2007.

Komitas, Collected Works, Vol. 4 (Solo Songs and Choral Works), Edited by R. A. Atayan, Yerevan, "Hayastan" Publishing House, 1976, - 203 pages.

Saryan, A. A., Armenian Urban Folk Song Art, in Armenian Ethnography and Folklore: Materials and Studies, Vol. 4, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the ArmSSR, 1973, pp. 85-175.

Manukyan, M. T, Folk Songs of the Martuni Region (Materials from Scientific Expeditions 1974-1977), Yerevan, 1977, - 191 pages.

Alahatoian, P., Musical-Ethnographic Collection of Balu (and the Surrounding Region), Performer: Maro Nalbandian,

Glendale, "Drazark" Publishing House, 2009, - 446 pages.

Traditional Armenian Music, Volume 5: Traditional Songs and Instrumental Pieces of Vaspurakan, Collected, transcribed, and compiled by Zaven Tagakchyan, Volume Editors: Z. Tagakchyan, H. Pikichyan, Yerevan, "Amrots Group", 2010, - 240 pages.

Ghaziyani A., Armenian Folk Songs of War and Soldiers, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the ArmSSR, 1989, - 391 pages.

The Armenian Genocide in the Ottoman Empire: Collection of Documents and Materials, Compilers: M. G. Nersisyan, R. G. Sahakyan, Yerevan, "Hayastan" Publishing House, 1991, - 758 pages.

Khrimyan Hayrik, Collected Works, Edited by H. Petrosyan, A. Madoyan, Yerevan, YSU Publishing House, 1992, - 448 pages.

Maghakia Archbishop Ormanian, Azgapatum (History of the Nation) // Chronicle of the Armenian Apostolic Church from the Beginning to Our Days, with Related National Circumstances, Vol. 3, Mother See of Holy Etchmiadzin, 2001.

REFERENCES

1. *Pahlevanyan A. A., Hay erazhshtakan folkloragituthyan ardi himnakhndirner՝, Dasagirk konservatoriayi magistrական usutzman hamar, Yer.: Amrotz Grup, 2018 th., - 176 eji.*
2. Hayreni erger, Hayrik Muradyani dzhaynitz vertsanetz, kazmetz ev khmbagretz A. A. Pahlevanyan՝, Yer., Nor girq, 2007 th.
3. *Komitas, Erkeri zhoghovatsu, 4-rd hator, (Menyerger ev khmbyerger), khmbagir A. Athayan, Yer.: Hayastan, 1976 th., - 203 eji???*
4. *Saryan A. A., Hay qaghaqayin zhoghovrdakan yergarvest՝, //Hay azgagruthyun ev banahyusuthyun, nyuther ev usum-nasiruthyunner, 4-rd hator, Yer., Haykakan SSH GA hrat., 1973 th., eji 85-175.*
5. *Manukyan M. T, Martunu shrjani zhoghovrdakan yerger (1974-1977 thth. gitarshavi nyuther), Yer., 1977 th., - 191 eji.*
6. *Alahatoyeon P, Balui (ev taratsashrjani) erazhshtakan-azgagrakan havaqatsoy, yergasatz Maro Nalpantean, Klenteyl, Drazark hrat., 2009 th., - 446 eji.*
7. //Hay avandakan erazhshtuthyun, Prak 5, (Vaspurakani avandakan yerger ev nvagner), Havaqetz, vertsanetz-notagretz ev kazmetz Zaven Thagakchyan՝, Praki khmbagirner Z. Thagakchyan, H. Pikichyan, Yer., Amroyz grup, 2010 th., - 240 eji.
8. *Ghaziyani A., Hay zhoghovrdakan razmi ev zinvari yerger, Yer., Haykakan KhSH GA hrat., 1989 th., - 391 eji.*
9. //Hayeri tzeghaspanuthyun Osmanyani kaysruthyunum, Pastathghtheri ev nyutheri zhoghovatsu, /kazmoghner: M. G. Nersisyan, R. G. Sahakyan, Yer.: Hayastan, 1991 th., - 758 eji.
10. *Xrimyan Hayrik, Erker, Hratarakuthyan patrastetzin: H. Petrosyan, A. Madoyan, Yer., EPH hrat., 1992 th., - 448 eji.*
11. *Maghakia arqepiskopos Ormanean, Azgapatum //Hay ughapar ekeghetzuy antzqer՝ skizben minchev mer orer՝, yarakitz azgayin paraganerov patmvats, G. hator, Mayr Athor S. Echmiadhzin, 2001 th.*

Հեղինակի մասին տե՛ս՝ էջ 146:
About the author: go to p. 146.
Сведения об авторе: см. на С. 146.